





## ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ

ՄԻՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՆԱՐԱՏՈՒԹԻՒՆԸ  
(ՄԱՔՐՈՒԹԻՒՆԸ)  
(ԲԱԺԻՆ Գ.)

«Այս քարոզը մանրամասնորեն կը սորվեցնէ, թէ սրբութեամբ, անարատութեամբ եւ մաքրութեամբ հոգին ինչպէս պէտք է ձգտի դէպի իր Տէրը, այսինքն՝ դէպի աշխարհի փրկիչը՝ Յիսուս Քրիստոս: Քարոզը նաեւ յարութեան ատեն մարմիններու պարզած վիճակին, չարին, ազատ կամքին եւ մարդկային բնութեան ու պատիւին մասին կարգ մը շինիչ խօսքեր կը բովանդակէ»:

### Մկրտութենէն ետք մեղքին կարելիութիւնը

13.- Սակայն կրնաս ըսել, թէ Տէրը եկաւ եւ խաչին միջոցով դատապարտեց մեղքը (Հո 8.3), որմէ ետք մեղքը այլեւս գոյութիւն չունի մեր մէջ: Ենթադրենք, որ զինուորներէն մէկը իր կառքը մէկու մը տան մէջ կեցուց: Միթէ ան տունէն ներս մտնելու եւ անկէ դուրս ելլելու ազատութիւն չունի: Նոյնպէս ալ մեղքը ազատութիւն ունի սրտին մէջ մտնելու եւ այնտեղ պատերազմելու: Գրուած է. «Սատանան Յուդային մէջ մտաւ» (ՅՀ 13.27): Այս իմաստով եթէ ըսես, թէ Քրիստոսի գալուստով մեղքը դատապարտուեցաւ եւ թէ չարը, մարդուն մկրտութենէն ետք ազատութիւն չունի անոր սրտին մէջ պայքար յառաջացնելու, միթէ չեն գիտեր, թէ այն օրէն, որ Քրիստոս եկաւ, մինչեւ այսօր, բոլոր անոնք՝ որոնք մկրտուեցան, չար մտածումներու դէմ կը պատերազմին: Անոնցմէ որմանք սին փառքերու զոհը կը դառնան, կը շնանան եւ կը չարանան: Կամ բոլոր անոնք, որոնք եկեղեցոյ սահմաններէն ներս կը գտնուին, արդեօք մաքուր, անարատ եւ անբիծ սրտեր ունին: Միթէ մկրտութենէն ետք բազմաթիւ մեղքեր չեն գործեր կամ շատեր մեղքով լեցուն կեանք մը չեն ապրիր: Ուստի, մկրտութենէն ետք նոյնիսկ գործ ազատութիւն ունի մտնելու մարդուն սրտէն ներս եւ ընելու այն՝ ինչ որ կ'ուզէ:

### Ամբողջական սրտով զԱստուած սիրելը

14.- Գրուած է. «Քու տէր Աստուածդ բոլոր սրտովդ սիրէ» (Բ. Օր 6.5), եւ դուն կ'ըսես. «Ես զԱստուած կը սիրեմ եւ Սուրբ Հոգին ունիմ»: Արդեօք յարատեւ Աստուծոյ մասին կը մտածես: Ջերմեռանդ սիրով կը սիրես ու անդադար զայն կը փափաքես եւ գիշեր ու ցերեկ այս հասկացողութեամբ անոր կապուած ես: Եթէ այո՛, ապա մաքուր եւ անարատ ես: Բայց եթէ այդ վիճակին մէջ չես, սա կը նշանակէ, թէ պէտք է միշտ քննես անձդ եւ հարց տաս դուն քեզի՝ եթէ երկրաւոր աշխատանքներու եւ պիղծ ու չար մտածումներու հանդիպիս, ինչ կ'ընես. արդեօք անոնց կողմը կը յարիս կամ Աստուծոյ յարատեւ սէրը կը փափաքիս եւ անով կը գրաւուիս: Երկրաւոր մտածումները մարդուս միտքը աշխարհիկ ապականեալ երեւոյթներու գերին կը դարձնեն եւ թոյլ չեն տար, որ ան սիրէ կամ զԱստուած յիշէ: Միւս կողմէ, կրնայ պատահիլ, որ անուս մէկը աղօթքի պահուն ծունկի գայ եւ միտքը պարպելով աշխարհիկ մտահոգութիւններէ, իսկական խաղաղութեան մէջ մտնէ: Եւ որքան խորը թափանցէ, ապա այնքան մեղքի պատնէշը խորտակելով կը մտնէ աստուածային յայտնութեան եւ իմաստութեան մէջ, որ ոչ իմաստունները, ոչ գիտունները եւ ոչ ալ հանճարները կրնան այնտեղ մտնել, հասկնալ ու գիտնալ անոր մտքին վեհ ու բարձր վիճակը, որով ան ընկղմած կ'ըլլայ աստուածային անհասանելի եւ ծածուկ խորհուրդներուն մէջ: Եւ ով որ սրտերը զանազանելու փորձառութիւնը չունի, ապա իր անփորձութեան պատճառով ատիկա չի կրնար արժեւորել եւ ոչ ալ գնահատել:

Ճշմարիտ քրիստոնեաները հեռու կը փախչին երկրաւոր փառքերէն եւ զանոնք վստահ կը համարեն (տես Փլպ 3.8), համեմատած այն գերազանց շահին հետ, որ իրենց մէջ կը ներգործէ:

### Շնորհքը եւ անկումը

15.- Հարցում. - Կրնայ ըլլալ, որ շնորհք ունեցող մարդը մեղանչէ: **Պատասխան.** - Եթէ անհոգութեամբ ապրի, անտես է ու անտարբեր գտնուի, ապա անշուշտ որ կը սայթաքի ու կը մեղանչէ: Որովհետեւ թշնամիին ուժերը ոչ կը թուլնան եւ ոչ ալ պատերազմել կը դադարին: Ահա թէ ինչու դուն ալ երբեք զԱստուած օգնութեան կանչելէ պէտք չէ դադարիս, որովհետեւ անտարբերութեան պատճառով կրած վնասդ կրնայ շատ մեծ ու ծանր ըլլալ:

16.- Հարցում. - Մարդուն անկումէն ետք արդեօք շնորհքը կը մնայ:

**Պատասխան.** - Աստուծոյ կամքն է, որ մարդ վերստին կեանքի կոչուի: Աստուած միշտ մարդ արարածը զոյգումի եւ գիտակցութեան կը հրաւիրէ: Եթէ շնորհքը կը մնայ՝ ապա հիմնական մէկ նպատակի համար, որպէսզի լուրջ աշխատանքի մղէ քեզ եւ ապաշխարութեամբ հեռանաս այն բոլոր սայթաքումներէն, որոնց միջոցով մեղանչեցիր:

ՀՈԳԵՒՈՐ ՔԱՐՈՉՆԵՐ  
Մեծն Սուրբ Մակար  
(Հայացոյց՝ Մակար Արք. Աշգարեան)  
(Շարունակելի 5)

## THE BOOK OF NUMBERS


WRITTEN: PROBABLY 600-400BC  
(USING STORIES FROM A MUCH EARLIER TIME)

### WHAT YOU NEED TO KNOW:

The book of Numbers does contain quite a few numbers (for example, it records the number of Israelites who were wandering in the wilderness with Moses). But really it is about how a group of unruly and uneducated people were trained and matured into the people God wanted them to be. Numbers takes us on the journey of the Israelites caught in the wilderness, continuing to switch between obeying God and disobeying him. Regardless of their behaviour, God continued to show favour and faithfulness to his people.

### WHY READ IT?

Every generation, including yours, must choose to take its stand with God. Even though a whole generation was forbidden by God to enter the Promised Land because of their disobedience, a new generation was being raised up to claim the inheritance. Like the Israelites, we often switch between obedience and rebellion. This book teaches us the results of these two choices



## THE GOSPEL OF JOHN

WRITTEN: AROUND AD90-100

### WHAT YOU NEED TO KNOW:



The Gospel of John is the last of the four Gospels. This one is quite different from the other three. It starts not with a factual account of some part of Jesus' life, but at the beginning of time, using symbolic language to represent who Jesus is. There are no parables in this book but there's plenty of imagery, as well as seven of Jesus' miracles and seven 'I am' statements describing who he is. John shows Jesus as both fully God and fully man – God in human form.

### WHY READ IT?

The book of John shows the incredible nature of Jesus as fully God, but also as God in human form. Jesus experienced human life and knows what it is like to feel emotions, to struggle, and to experience loss, excitement and joy. He is a God who understands everything we go through.

TURN THESE SHAPES INTO

SOMETHING ELSE





### ԱՌԱԿՍ ԶԻՆՉ ՑՈՒՑԱՆԷ...

#### ԿՈՐԵԿԻՆ ՅԱՆԴՐՆՈՒԹԻՒՆԸ

Նոյն սխալը կը կրկնէ նաեւ կորեկը ըսելով.

- Եթէ խոնարհութիւնը գովելի է, առաւելաբար ինծի կը վայելէր որ Տիրոջ մօտիկ ըլլայի, որովհետեւ այնքան խոնարհ եմ, մինչեւ իսկ զիս պատուողներուն ձեռքէն կը սահիմ եւ գետին կ'իյնամ:

Այս եւս իբրեւ անմիտ կը յանդիմանուի՝ եւ իր յարգը չգիտնալով, անմիտներու կեր կը դառնայ:

**Այս առակին իմաստը հետեւեալն է. գիտակցաբար խոնարհիլը իսկական խոնարհութիւն է, իսկ կեղծաւորաբար խոնարհութիւնը, երբ ժամանակին եւ տեղին չի կատարուիր՝ խոնարհութեան հերքումն է:**

Մխիթար Գոշ

### ՅԻՍՈՒՍ ԿԸ ԲԺՇԿԷ ԱՆՂԱՄԱԼՈՅԸ

Յիսուս միայն չէր սորվեցներ, այլ նաեւ ամէն հարցի մէջ կ'օգնէր մարդոց, մանաւանդ հիւանդներուն՝ կոյրերուն, խուլներուն, կաղերուն, զանոնք բժշկելով:

Օր մը Յիսուս իր ծանօթներէն մէկուն տունն էր, այնքան մարդ հաւաքուած էր, որ այլեւս տեղ չկար:

Չորս ընկերներ, անդամալոյծ ընկեր մը ունէին, երբ լսեցին, որ Յիսուս այնտեղ էր, իրենց մօտակայքը, իրենց անդամալոյծ ընկերը շակած տարին, որ բժշկուի, բայց չկրցան ներս մտնել: Այնքան մեծ էր իրենց սէրը իրենց ընկերոջ հանդէպ, որ ամէն ինչ ըրին, զինք Յիսուսին մօտ բերելու: Անհնար էր, բայց ճարպիկ գտնուեցան, բարձրացան տանիք, անցք մը գտան եւ պարաններով զինք իջեցուցին ճիշտ Յիսուսի ոտքերուն առջեւ:

Յիսուս շատ ուրախացաւ այս ընկերներուն հաւատքը տեսնելով եւ անդամալոյծին ըսաւ.

- Քու մեղքերդ ներուած են: Ոտքի կանգնէ եւ տուն գնա:

Անդամալոյծը ոտքի ելաւ եւ շնորհակալութիւն յայտնելով, իր ընկերներուն հետ տուն վազեց:

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ  
ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ  
ԱՇԱԿԵՐՏԻՆ ԳՐՔՈՅԿԸ

### Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՒ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ԾԻՍԱԿԱՆ ՕԳՏԱՇԱՏ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

#### ԻՆՉ Է Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆԸ:

Ս. Հաղորդութիւնը մեր Տիրոջ եւ Փրկչին կենարար եւ սուրբ Մարմինն ու Արիւնն է, ուստի պէտք է պատրաստուած հոգիով եւ երկիւղածութեամբ մօտենանք Ս. Խորան՝ ստանալու համար զԱյն: Առաքելական կանոնն է, որ այր մարդիկ բաց գլխով աղօթքի կանգնին, իսկ կիները՝ քողով, գլխաշորով ծածկուած (տես Ա.Կորնթացիս 11.4-10): Պօղոս առաքել բոլորիս կ'ազդարարէ ըսելով. **»Այսուհետեւ՝ ռվ որ անարժանութեամբ ուրէ այս հացը կամ խմէ Տիրոջ բաժակէն, Տիրոջ մարմինն եւ արեան դէմ մեղանշած կ'ըլլայ: Ուստի ամէն մարդ նախ ինքզինքը թող քննէ եւ ապա միայն այս հացէն ուրէ եւ բաժակէն խմէ, որովհետեւ ով որ անարժանութեամբ կ'ուրէ եւ կը խմէ՝ այդ ուրելովն ու խմելովը ինքզինք դատապարտութեան կ'ենթարկէ, քանի որ զանազանութիւն չի դներ սովորական հացին եւ Տիրոջ մարմինն միջեւ:«** (Ա.Կորնթացիս 11.27-29):

#### Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ ՊԱՀՈՒՆ ԻՆՉ ՊԷՏՔ Է ԸՍԵՆՔ:

Երբ կը մօտենանք Ս. Հաղորդութիւն ստանալու, նախ պէտք է խաչակնքենք մեր դէմքը, **»Մեղայ Աստուծոյ»** ըսենք, երկիւղածութեամբ ճաշակենք զայն, երկրպագենք՝ **»Փառք քեզ Տէր Աստուծ»** ըսելով, ու ապա անցնինք մեր տեղը եւ շնորհակալութեան աղօթք ընելով խոնարհինք մեր հոգիին մէջ: Ս. Հաղորդութիւն տուած պահուն պատարագիչ քահանայ հայրը մեզի համար այսպէս կ'աղօթէ. **»Մարմին եւ Արիւն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցի քեզ փրկութիւն եւ առաջնորդ յանվախճան կեանս: Ամէն»** (= Մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի Մարմինը եւ Արիւնը քեզի փրկութիւն ըլլան եւ առաջնորդ՝ յախտենական կեանք հասնելու: Ամէն):

#### ԱՂՈԹՔ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԼԷ ԵՏՔ

Դուն, որ մեր տկար բնութեան փորձառութիւնը ունեցար, ռվ մեր Քահանայապետը՝ Յիսուս, քեզի կը նայինք: Դուն՝ որ մեզի համար մեղքի պատարագ եղար, որպէսզի մենք քեզի համար արդար ըլլանք: Դուն՝ որ մեզի համար երկրաւոր եղար, որպէսզի մենք քեզի համար երկնաւոր ըլլանք: Դուն՝ որ մեզի համար Հաց եղար, որպէսզի մենք քեզ ճաշակելով սրբուինք: Տնոր վիշտերով լեցուն քու Մարմինդ, որպէսզի բոլոր սիրտերը քեզ ճաշակեն եւ սրբուին: Մատուակէ՛ վտակի պէս կաթկթող քու անմեղ Արիւնդ, որպէսզի մարդիկ անմեղութեամբ յագենան: Երկարէ՛ փրկական խաչդ՝ այս աշխարհի ծովուն մէջ լողացողներուս, մեզ վեր՝ դէպի քեզ բարձրացնելու համար:

Շնորհքի կարօտ ենք, սփռէ. յոգնած ենք մեղանշելէ, քաւէ. խաարի մէջ կը խարխափինք, ճառագայթէ. մեր հաւատքէն տապալած ենք, հաստատէ: Դուն ես յոյսը, դուն ես լոյսը, դուն ես կեանքը, դուն ես քաւութիւնը, դուն ինքդ ես անմահութիւնը: Քեզի կը սպասենք, քու շնորհքիդ կոթնածներս. քեզմէ՛ փրկութիւն ստանալու կարօտ ենք, քու Մարմինիդ միացածներս. քեզ իբրեւ քաւիչ Քահանայ ունինք, մենք՝ քու Արիւնովդ գնուած հօտը: Նայէ՛ բոլորիս, սփոփէ՛ մեր տարակուսանքները քու փրկագործութեամբդ, հանդարտեցնիր մեր խռովութիւնները քու խաղաղութեամբդ, հանգստացնիր մեր յոգնած հոգիները քու օթեաններուդ մէջ, ուր դուն գացիր, ռվ Տէր, եւ նոյնը մեզի խոստացար: Եւ արժանացնիր մեզ՝ քեզի պատկանողներս, որ փառաւորենք քեզ, Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին՝ յախտենան: Ամէն:

Ս. ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ

(Շարունակելի 4)

Տաթև Աւագ Քահանայ Միքայէլեան

### ԱՄԷՆՕՐԵԱՅ ԱՂՈԹՔ

Բարերար Տէր, ողորմութեամբդ նայէ՛ քեզի երկրպագողիս եւ քու սուրբ անունդ փառաբանողիս:

Տէր զօրութեան, հանդարտեցնիր հոգիս սատանայական բոլոր խռովութիւններէն ու աշխարհիկ հոգերէն:

Առաքէ՛ քու խաղաղութեան հրեշտակդ, որ զիս անխռով պահէ՛ զիշեր ու ցերեկ, քնացած թէ արթուն եղած ատենս, որպէսզի միշտ գոհութեամբ փառաւորեմ քեզ:

ԱՄԷՆ:

### WORDS OF COMFORT GOD COMFORTS HIS PEOPLE

Then the young women will dance and be happy, and men, young and old, will rejoice. I will comfort them and turn their mourning into joy, their sorrow into gladness.  
Jeremiah 31.13

Sing, heavens! Shout for joy, earth! Let the mountains burst into song! The Lord will comfort his people; he will have pity on his suffering people.  
Isaiah 49.13

Jesus said, "I am the resurrection and the life. Those who believe in me will live, even though they die; and those who live and believe in me will never die."

John 11.25b-26a



